

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 7 ՆՈՅ., 1930

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՂԱԾԱՆՔԸ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՅԼԱՍԵՐԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

ՎԵՐ. Հ. Թ. Հ.

Բ. ԹԱԿՈՐ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ԳԻՐՔԵՐԸ

ՎԵՐ. Ե. ԿԷՕՔԿԷՕԶԵԱՆ

ՄԻՍԸ ԻՐԻ ՍՆՈՒՆԴ

ՏՈՔԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈԼԷՑ ՀԱԼԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՄԵՐՈՒԿԻ ԵՐԿՐ

Ազատ քաղաքացիական Պարս Տիֆլիսի

գրումներին

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈՒՆ

«Ո՛հ, մեր վայելած այս անուշիկ ճաշը որքա՛ն թանկագին է,» ըսաւ քոյրը, ու միւսներն ևս նոյնը հաստատեցին. և անոնց դատողութիւնը անշուշտ ուղիղ էր, քանի որ ճիշտ այդ ատին ճաշը վերջացած էր, ու աղանդերը սեղանին դրուած, և ամէնքը միասին հաւաքուած էին սեղանին շուրջը լամբարի լոյսին տակը:

«Օ, շատ ուրախ եմ ասիկայ լսելուն համար» գոչեց Սքրուճի քեռորդին, «որովհետեւ ես մերիններուն եփած կերակուրներուն վրայ այդչափ մեծ հաւատք չունէի, քո՛ւ գաղափարդ լի՛նչ է, Թափըր:»

Թափըր, որ մինչև այն ատին իր աչքը Սքրուճի քեռորդին քոյրերէն մէկուն վրայէն բնաւ չէր վերցուցած, պատասխանեց թէ ինք՝ որ տակաւին ամուրի մէկն էր, այդ կարգի խնդիրներու մասին գաղափար յայտնելու իրաւունք չունէր. ասոր վրայ Սքրուճի քեռորդին քոյրը՝ որուն կը նայէր թափըր՝ շիկնեցաւ:

«Շարունակէ», ըսաւ միւս քոյրը, խօսքը իր եղբորը ուղղելով, «խօսքդ կէս թողուցիր, դուն ալ տարօրինակ մարդ ես:» Ասոր վրայ Սքրուճի քեռորդին դարձեալ անգլին քահքահ մ'արձակեց, այնպէս որ ամբողջ տան մէջ եղողներ ևս միացան, նոյն իսկ ան աղջիկը՝ որ պահ մ'առաջ թափըրի նայուածքին առարկան էր:

«Սա պիտի ըսէի թէ», ըսաւ Սքրուճի քեռորդին, «մեզ չսիրելուն, ու մեզի

չգալուն արդիւնքը իմ կարծիքովս սա է որ հաճելի ժամանցէ մը կը գրկուի: Վստահ եմ որ մեզի չափ հաճելի ընկերակցութիւն մը չի կրնար գտնել ո՛չ իր մտքին մէջ, ո՛չ իր պաղ վաճառատան մէջ և ո՛չ ալ իր առանձին տան փոշոտ սենեակերուն մէջ: Ես կը փափաքեմ տարին անգամ մը գոնէ պատեհութիւն տալ իրեն որ այս հաճոյքը վայելէ, որովհետեւ իրեն կը խղճամ. թող ինք ծաղրէ Ծնունդը, եթէ կ'ուզէ, և թող մինչև իր մահը շարունակէ ծաղրել, չը մեղադրենք զայն, որովհետեւ ատկէ լաւագոյն բան մը չի կրնար խորհիլ, ես ամէն տարի Ծնունդին՝ քովը կ'երթամ, և զուարդ սրտով իր որպիսութիւնը կը հարցնեմ, ո՛վզիտէ, թերեւս ասանկով քիչ մը սիրտը կը կակուղնայ, թերեւս վերջապէս օր մը իր աղքատ գրագիրին յիսուն ոսկի կտակելու բարի գաղափարը ունենայ, երէկ երբ որ իր հետ կը խօսէի, կարծեմ քիչ մը ազդուեցաւ:»

Այս անգամ խնդալու կարգը միւսներուն եկաւ, երբ անոնք լսեցին «կարծեմ քիչ մը ազդուեցաւ» ըսելը: Իսկ ըմբռնած քեռորդին, բնաւ որովհետեւ բարի ըլլալով՝ շատ մանրամասն չխորհեցաւ թէ ասոնք որո՞ւ վրայ կը խնդային, հերիք էր որ կը խնդային, ուստի վանոնք աւելի քաջալերելու համար թէյը լեցուց և իւրաքանչիւրին մէկ մէկ գաւաթ հրամցուց:

Երբ թէյը վերջացաւ, սկսան երգի, որովհետեւ երգելը կը սիրէին, և կը վստահեցնեմ ձեզ որ երաժշտութեան մէջ բաւական յառաջացած էին. գովեստի արժանի էր նաեւ Թափըրը՝ որ պատկերէր լաւ գիտցողի նման, և երգած ատենը ոչ ճակատին հաստ երակները կ'ուռէին, ոչ ալ երեսը շատ կը կարմրէր:

(Շար.) 24

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 7 ՆՈՅ., 1930

ԹԻԻ 19

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՄԱՆՔԸ ԱԽԵՏ. ՔԱՐՈՂՁԻՉ ՄԸ ԿԸ ՔԱՐԿՈՐՈՒԻ

Հալէպի հիւսիսային արեւելեան կողմը, քաղաքէն քառորդ ժամ հեռու յաճախ տափարակ բլուրի մը վրայ, կէօք-Մէյտան կոչուած վայրը, Ազգերու Դաշնակցութեան Գաղթային մասնախումբը ներկայացնող Մ. Պիւրնիյէի աշակցութեամբ շինուած է նոր հայկական թաղը որ կը բաժանուի 425 տուներ, կամ աւելի քան 500 բնտանիքներ: Աստուծոյ պատ հոս հաստատուած են նաեւ Միւ Եփէի կողմանէ պաշտպանեալ աշրի կիներու յատկացուած շէնքերը:

Առաջնորդարանի կողմանէ շինուած է գեղեցիկ դպրոցական շէնք մը, որ սակայն թաղին 6.700 մանուկներուն կրթական պէտքը չի կրնար գոհացնել իր տեղին անբաւարարութեան պատճառաւ: Սկսած են կառուցանել նաեւ գեղեցիկ սրբատաշ եկեղեցի մը, որուն շինութիւնը բաւական յառաջ գացած է: Եկեղեցական արարողութիւնները առայժմ կը կատարուին տան մը մէջ:

Հոս կայ նաեւ 65 բնտանիքներէ բաղկացեալ Հայ Աւետարանական համայնք մը, բաղկացեալ զրեթէ կէս առ կէս թըրքախօսներէ և հայախօսներէ: Թրքախօս աւետարանականները կը յաճախեն Համիտիյէի քէմբին Հայ Աւետ. եկեղեցիին, իսկ հայախօսները Թուրքիայէն վերջին անգամ տարագրուած Քարբերդի շրջանէն հոս ապաստանած Հայ բեկորներ են, որոնք իրենց հետ եկած իրենց քարոզիչին առաջնորդութեամբ կ'ունեն-

ան իրենց կրօնական ժողովները վարձուած տան մը մէջ: Ծիշող նոյն տան մէջ բացուած է նաեւ դպրոց մը, որ ունի 61 աշակերտներ վարժուելի մը խնամքին տակ:

Կ'երեւի թէ ոմանց կողմանէ անբաղձալի նոյնիսկ ազգաբնակչութեան նկատուած են այս աւետարանական Հայերու կրօնական ժողովներն ու դպրոցը: Եւ ազգը փրկելու նախանձայնութեամբ և ազգասիրական եռանդով կը ջանան դպրոցը խափանել և կրօնական ժողովները արգիլել: Իրենց այս ջանքին մէջ քայլ մ'առ առաջ երթալով քաջութիւնը կ'ունենան աւետարանական քարօզիչը քարկոծելու պաշտամունքը լրանալէ վերջ:

Այս դէպքը մասնաւոր կարեւորութիւն մ'ունի. ասիկա պատահական անջատ դէպք մը չէ, այլ նման երեւոյթներու շղթային մէկ օղակը, որ ենթադրել կուտայ աւետարանական եկեղեցիի հակառակ ոգի մը, որ երեւան կ'իլլէ կանխամտածեալ արարքներու միջոցաւ:

Դիտելի է որ մինչ ամէն տեղ Հայ Առաք. և Հայ Աւետ. եկեղեցիները կը գործակցին կրթական բարեգործական ընկերային մարգերու մէջ, Հալէպի շրջանին մէջ է որ այս անախորժ դէպքերը կը պատահին: Դիտենք թէ Հայ Առաք. համայնքէն մեր շատ մը լուրջ ազգակիցները խոր կռիւծով կը դիտեն այս բոլորը, և նոյնիսկ կ'ամչնան անոնց համար: Բայց պէտք է վերջ մը տալ այս անպատուաբեր արարքներուն:

Այս նման արարքները երբեք չեն ազգեր Հայ Աւետ. եկեղեցիին ընդգրկած ուղղութեան վրայ. անիկա անշուշտ համարձակ պիտի քալէ իր խաղաղասի-

բական, ծառայութեան, բարի կամեցողութեան ուղիէն, հարուածները փոխարինելով սիրոյ ընծաներով:

Լիւայոյս հնք թէ Հալէպի բարեջան Առաջնորդը Սիւրմէեան Եպիս., որ աշակերտ իւր հսկէ իր հօտին վայ, պիտի դարմանէ այս ամօթալի դէպքին հետքերը, ներշնչելով իրեններուն քրիստոնէական սէր և խաղաղասիրական ոգի:

Նոյնպէս վստահ ենք որ Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը իր բարձր հեղինակութիւնը պիտի գործածէ, որպէսզի

աւելի սիրալիր միջոցաւ մը սահղծուի հոս, և որպէսզի մուրթ տարրերը չյանդգնին քոյր եկեղեցիներու սիրալիր փոխյարաբերութիւնները խանգարելու, պատճառ դառնալով անոնց իրարմէ ուժացմամբ և մեկուսացման:

Որչա՛փ պէտք ունինք, ներկայիս, զօրացնելու թոյլատու և յարգալիր ոգին խիղճի և կրօնքի ազատութեան հանդէպ զոր մեր փառապանծ նախահայրերը Աւարայրի դաշտին վրայ գնացին իրենց արիւնով:

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ՀՈԳԻՆ ԿՈՐՄՆՅՆԵԼ ՀԱՃԵԼԻՕՐԷՆ

Կրօնական մը իր ժողովուրդէն տիկին մը այցելեց, որ նորածնութեան առաջնորդ մ'էր, և զայն պարահանդէսի մը համար պատրաստութեան մէջ զըտաւ: Տիկինը սկսաւ մեծ հաճոյքով պատմել թէ սենեակները ինչպէ՛ս պիտի զարդարուին, որո՛նք ներկայ պիտի ըլլան և յին, և ապա հովիւին կարծիքը հարցուց այս մասին: «Տիկին,» ըսաւ հովիւը, «Դուք ինծի յիշել կուտաք Ֆրանսայի այն թագաւորը, որ մինչ բուրդը երկիրը անգլիական բանակին տակ էր ինքզինքը պարահանդէսներու և խնջոյքներու տուաւ: Գահը պաշտպանող քաջարի աղետական մը թագաւորը այցելեց՝ մինչ ան սին հաճոյքով զբաղած էր. և երբ արքան մօտալուտ պարահանդէսի մը մասին խօսեցաւ և հին ռազմիկին կարծիքը հասկնալ ուղեց, ան ըսաւ. «Ես չեմ տեսած թագ մը և թագաւորութիւն մը որ այսչա՛փ հաճելի կերպով կորսուած ըլլայ:՝ Նոյն բառերով ես պիտի ըսէի թէ երբեք չեմ տեսած հոգի մը որ այսչափ հաճելի կերպով կորսուի:» Յանդիմանութիւնը տիկնոջ սրտին դպաւ: Պարահանդէսը կատարեց, բայց երբ ան լմնցաւ հաւատարիմ եկեղեցականին խօսքը մը-

տարերեց և խորունկ կերպով խորհեցաւ անոր վրայ, իր Փրկիչին նայեցաւ և գրտու այն խաղաղութիւնը զոր աշխարհ չի կրնար տալ:

ՆԿԱՐ ՄԸ ՈՐ ՆԿԱՐԻՉԻՆ ՄԱՀԷՆ ԵՏՔԸ ԿԸ ԼՐԱՆԱՅ

ԺԶ. դարուն մէջ, երբ Վենետիկ համաճարակէ մը կը տառապէր, ծեր նկարիչ մը պատկերի մը վրայ կ'աշխատէր, զոր կը փափաքէր իւր գերեզմանին վերը գնել: Այս ծեր արուեստագէտը նշանաւոր թիթիանն էր, որ իր կեանքին հարիւրերորդ տարիին միջոցին նկարով մը զբաղած էր: Այս նկարը կ'արտայայտէր ժամանակի տխրութիւնն ու սարսափը և նկարիչին կրօնական եռանդը: Բայց թիթիան իր գործը չլրացուցած վրձինը անոր տկար մատներէն ինկաւ, և զայն ուրիշ մէկը լրացուց և սատողը գրեց. «Ինչ որ թիթիան անկատար թողուց Փալմա ակնածանքով լրացուց, և զործը Աստուծոյ նուիրեց:» Ասիկա չիտակ է նաեւ բոլոր բաներուն համար զոր կը կատարենք Տէրոջ համար: Գործիչը կրնայ մեռնիլ բայց Աստուծոյ գործը առանց ընդմիջումի կը շարունակէ: Մէկը կ'սկսի, ուրիշ մէկը կը լրացնէ, մէկը կը ցանէ ուրիշ մը կը հնձէ:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՅԼԱՍԵՐԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Առիւծը մոռնեց ո՞վ պիտի չվախնայ: Տէր
Եհովան խօսեցաւ ո՞վ պիտի չմարգարէա-
նայ: (Ամովս 3: 8)

Բովանդակ մարդկութիւնը տնտե-
սական եւ ընկերային ահաւոր տագնա-
պի մը մէջէն է որ կ'անցնի: Աշխարհի
ամէն կողմը միլիոնաւոր անգործներ,
օրական չոր հացի կարօտ մահու եւ կե-
նաց պայքար կը մղեն:

Ինչո՞ւ է այս տագնապը. ի՞նչ են
անգործութեան եւ թշուառութեան իս-
կական պատճառները. արդեօք երկրիս
վրայ բոլոր մարդոց բաւարար ուտես-
տեղէն եւ զանոնք ապահովելու նիւթա-
կան միջոցներ կը պակսուին:

Անցեալները «Նոր Աւետարեք» կը
հաղորդէր թէ Ամերիկայի մէջ հաճոյքի
համար տարեկան երկու հազար հարիւր
միլիոն տոլար կը ծախսուի: Եթէ աշ-
խարհիս բոլոր բնակչութիւնը 2000 մի-
լիոն ըլլար, ու այս մոխուած զրամն ալ
գէթ մէկ տարուան համար խնայուէր
իւրաքանչիւր հոգիի մէկ տոլարէ աւելի
բաժին մը պիտի իյնար: Եթէ մարդիկ
իրենց ունեցածը խնայողութեամբ
գործածէին ու շինարար եւ բարի նպա-
տակներու յատկացնէին, 2000 միլիոն
մարդկութիւնը խիստ գոհացուցիչ կեր-
պով կրնային ապրիլ:

Ո՛չ. անգործութեան, թշուառու-
թեան բուն պատճառը քաղաքական կամ
տնտեսական չէ, այլ հոգեւոր եւ բա-
րոյական: ԺԸ. դարու սկիզբները կը մա-
խացած եւ դաշտերու մէջ բոյսերու ար-
մատներ կրծող նրանսացի գիւղացիու-
թեան սրտածմելի կացութիւնը քաղա-
քական ու տնտեսական տագնապի ար-
դիւնք չէր: Անիկա Վէրսայի պալատ-

ներուն մէջ գեղիս, հաճոյամու, ժողո-
վօրդին արիւնը տղրուկներու նման
քամոյ Լուի ԺԴ. ներսը անստուածու-
թիւնն եւ անբարոյականութիւնն էր:

Այսօր նմանապէս երբ միլիոնաւոր-
ներ անօթի ու ծարաւ, մերկ ու բոյրիկ,
անտուն եւ անտիրական սովամահ կ'ըլ-
լան, երբ միլիոնաւոր յոգնած ու վիրա-
ւոր ճամբորդներ, ազքատ Ղազարոսներ
գթութիւն ու օգնութիւն կը հայցեն,
անգին Ամերիկա եւ այլաւ պարասրահ-
ներու թատրոններու ու այլապան գրօսա-
վայրերու մէջ ամէն դասակարգի մար-
դիկ ու կիներ տառապող մարդկութեան
ծովածաւալ պէտքին հանդէպ անտարբեր
անզգամ, շռայլօրէն անգութօրէն կը մը-
խեն իրենց անասնական կիրքերուն գո-
հացում տալու համար: Եւ թապալաշու-
թիւն, հաճոյամուլութիւն, անաստուա-
ծութիւն, այլ բացատրութեամբ հոգե-
ւոր ու բարոյական սնանկացումի ար-
դիւնք է ներկայ համաշխարհային տագ-
նապը:

Իսկ ասիկա Քրիստոնէական Եկեղե-
ցիներու այլասերումը կ'ենթադրէ: Ա-
մերիկա գտնուած միջոցիս բարեկամի
մը հետ այս տխուր կացութեան շուրջ
խօսակցելու ատեն ան գիտել տուաւ
թէ Ամերիկեան եկեղեցիները ազդակ
մըլլալէ դադրած են ժողովուրդը դէպի
տհաւոր գահազէժ տառջնորդող մօլու-
թիւններէ ազատելու համար: Այս խոր-
հուրդը կը բաժնեն Ամերիկայի հոգեւոր
ու քաղաքական ամենակարեւոր ա-
ռաջնորդները: Երբ Պոստոն դոմար-
ուած Հայ Աւետ. եկեղեցիներու տարե-
կան համաժողովէն դուրս ելած կը պօր-
տէինք, երկու պաշտօնակիցներ զար-

մանքնին կը յայտնէին ինծի թէ ի՞նչպէս Ամերիկահայութեան մէջ բարձր ու անկեղծ կոչումի տէր հոգեւորականներ կը տեսնէի: Համատարած նիւթապաշտութիւնն ու հաճոյամոլութիւնը գիրենք այնքան սկեպտիկ դարձուցած բարոյալըքած էր, որ Եղիայի նման չէին կրնար տեսնել թէ Աստուած հազարաւորներ պահած է որոնք տակաւին Բատղի առջեւ ծնրադրած չեն:

Այսու հանդերձ բարեկամներս իրաւունք ունէին: Արտերը թէն ճերմկած և հունձքը առատ է, բայց մշակները շատ քիչ են: Եկեղեցականութիւնը մեծաւ մասամբ մեղկ, նիւթապաշտ, արխուսոյրաքի՜ դարձեր է ու շատ տեղեր եկեղեցիները ընկերային, գեղարուեստական ու քաղաքական գլխաւորութիւնը վերածուած: Դրիստոնեայ եկեղեցիներու հոգեւոր ու բարոյական գիտակցութիւնը բթացած է. իսկ կղերականութիւնը այլաւորած, փարիսեցիացած, կեղծ ու անբարոյական գիւանազրտութեան հետ՝ խաղաղութիւնը արտաքին երևոյթներու մէջ կը փնտռէ:

Ասկէ մօտ 2800 տարի առաջ Պաղեստինի մէջ խաշնարած ու մոլաթուզի այգեպան Ամովս նմանօրինակ կացութեան մը մէջ կը գտնուէր: Իսրայէլի տասը ցեղերը դրացի ազգերու հետ խաղաղութեան դաշնագրութիւններ կնքած, ազատութեան ու առատութեան շրջան մը կը բոլորէին: Թագաւորէն սկսեալ մինչև յետին բարեկեցիկ քաղաքացին կուտէին, կը խմէին ու շռայլօրէն կը մըսէին երկրին հարստութիւնը: «Վա՛յ Սիոնի մէջ հանգիստ բնակողներուն ու Սամարիայի լերանը վրայ ապահով նստողներուն...: Վա՛յ անոնց որ չարօրը կը հեռացնեն և բռնութեան աթոռը կը մօտեցնեն. փղոսկրեայ մահիճներու վրայ կը պառկին ու իրենց անկողիններուն վրայ կ'երկնան, և հօտերու գաղտնակները ու գոմերու մէջ պարարտ

որթերը կ'ուտեն... դաւաթներով գինի կը խմեն ու ծանրազին իւզերով կ'օծուին և Յովսէփի բեկումին վրայ չեն ցաւիր:»

Ամովս Թէկուէի հովիտներուն մէջ ոչխարները արածելու ատեն կը խոկարայա տխուր կացութեան վախճանին վերայօք, եւ կարծես թէ օրըստ օրէ զօրացող ձայն մը կուգար իր ականջներուն եւ ահաւոր տեսարան մը կը պատկերացուէր աչքերուն առջեւ: Եւ օր մը սարսուղեցիկ մռնչիւն մը թնդացուց այդ ականջները, սոսկալի երեւոյթ մը ահարկեց իր աչքերը: Իր բոլոր էութեամբը ցնցուեցաւ. «Աւու՜ժը մռնչեց ո՞վ պիտի չվախնայ. Տէր Եհովան խօսեցաւ ո՞վ պիտի չմարգարէանայ»:

Ամովս կրօնական խորունկ փորձառութիւն մ'ունեցաւ: Տէր Եհովայի ձայնը մռնչող աւուժի մը պէս լսեց, որովհետեւ զայն գնտակէ լարով շինուած պարիսպի մը վրայ տեսաւ: Անիկա իր սրտին, մտքին եւ հոգւոյն խորերը այնպէս զգաց եւ համոզում գոյացուց թէ Աստուած, այսինքն Տիեզերքի Արարիչն ու կառավարիչը, Տէրն ու Փրկիչը, արդար, ճշմարիտ, ողորմած ու գթասիրտ Աստուած մըն է: Անիկա անհատական, ազգային կիանքի տունը արգարութեամբ ու ճշմարտութեամբ շինած էր ու կը շինէ:

Ամովս իր բոլոր էութեամբը ցնցուեցաւ, քանզի խորունկ համոզում և հաւատք գոյացուց թէ առանց արդարութեան շինուած կեանքը կը նմանի առանց գնդակի լարէ շինուած պարիսպի մը որուն անկումը ահաւոր պիտի ըլլայ՝ եթէ անձրեւները տեղան ու փոթորիկները փչեն: Իսրայէլ իր ազգային կիանքը խաղամոլութեամբ, հաճոյամոլութեամբ, կաշառակերութեամբ և անարգարութեամբ շինած էր, հետեւաբար իր անկումը անխուսափելի էր:

Այսօր Ամովս, Եսայի ու Երեմիանե-

բու նման ճշմարիտ մարդարէններու պէտք ունինք տնտեսական տաղանտաւորմատական լուծում մը տալու համար: Արդարութեան, ճշմարտութեան, ուղորմութեան ու զթութեան Աստուծոյն, կենդանի ու Յաւիտենական Աստուծոյ ձայնը, մոնչող առիւծի նման լսելու աւանդներ ունեցող և իրենց բովանդակէութեամբ սարսուռ զգացող կղերականութեան մը կը կարօտինք:

Բայց ոչ, Ամովս մ'ըլլալ չի բաւեր. ահաւոր դատաստանի վախն ու սպառնալիքը չէ կրցած և չի կրնար փրկել արդէն դժոխացած սրտերը: Մարդաբէ մ'աւելի մեծ մէկու մը կարօտ է աշխարհ: Իրենց կեանքերուն մէջ արդարութեան Արեգակին, Յիսուս Քրիստոս մեր տէրոյնով եղած անհուն Սէրը մարմնացուցած, խաչին սարսուռազդեցիկ գեղեցիկութեամբը, խոզացած ու պոռնկացած սրտերը՝ երկնաւոր Հօր Սիրոյ ծոցը մազնխաւցնող Նոր Քրիստոսեաներու, Նոր Պօղոս և Ս. Պարմենիոսներու, Նոր Ծնորհալի և Մուտիններու, Նոր Լիւզինկսթըն ու Կանտիններու պէտք ունի աշխարհ:

Առիւծը մոնչեց ո՞վ պիտի չվախնայ, Տէր ետզան խօսեցաւ ո՞վ պիտի չմարդարէանայ: Յս. Քս. ի սէրը մեզ կը ստիպէ, մանաւանդ վայ է ինծի եթէ— չքարոզեմ Քս. ի Աւետարանը: Քրիստոսացած, Աստուածացած, Ս. Հոգւոյն ճշմարտութեան հոգւոյն բոցեղէն կայծովը բռնկուած Առաքեալներու՝ ակնկառոյց կ'սպասէ մոլորած ու սնանկացած մարդկութիւնը:

Անգլիոյ Նօթինկհըմ քաղաքին մէջ Ուէսթլիականները աղօթարան մ'ունին, ուր Ուիլլեմ Պոթէ՝ Փրկութեան Բանակի հիմնադիրը՝ դարձի եկած է: Յիշատակարան մը հոն թարմ կը պահէ յիշատակը այն դէպքին թէ դժբաղդներու բարեկամ այս աշխարհահոգեւոր մարդը իր հոգեւոր զօրութեան մկրտութիւ-

նը ստացաւ ուրիշ աղօթարանին մէջ: Բնականաբար աղօթարանը, աշխարհի ամէն կողմը Փրկութեան Բանակի առաջնորդներուն ուխտատեղին եղած է: Օր մը տարիքոտ սեւամորթ մը Բանակի համազգեստով աղօթարանի հովիւին առջեւ կեցած գտնուեցաւ, աչքերը դէպ ի յիշատակարանը յառած:

«Մարդ հոս կրնա՞յ աղօթք մը մատուցանել» հարցուց նա: «Անշուշտ», պատասխանեց հովիւը, «մարդ կրնայ աղօթել հոս»: Եւ Փրկութեան Բանակի այս ծերուկ պաշտօնեան ծունկի եկած և ձեռքերը դէպ ի յիշատակարանը բարձրացուցած աղօթեց: «Աստուած նորէն ըրէ, նորէն ըրէ»:

Տէ՛ր, նոր Ամովսներ, նոր Քս. ներ նոր Պօղոս և նոր Սբ. Պարմենիոսներ զրկէ: Կ'աղաչենք նորէն զրկէ, նորէն զրկէ: Զ. Յ. Զ.

ԲԱՊԻՆՏՐԱՆԱԹՆ ԹԱԿՈՐ

ԺԸՆԵԻԻ ՄԷՁ

(Տեսակցութիւն մը)

Հնդկաստանի ներկայ քաղաքական ու բարոյական հոսանքներուն ուզողութիւն տուող քանի մը դէմքեր կան, որոնք կը տիրեն Հնդկաստանի մաքին վրայ: Ասոնցմէ ոմանք քիչ ծանօթ են Հնդկաստանէն դուրս, ինչպէ՞ս Միգրիի Մահարաճան՝ Ազատական Բամասվամի Այիատ՝ Նիհրու՝ Մահատականներու հոսանքը վարող Ալի եղբայրները՝ Ազախան և ուրիշներ: Բայց ամբողջ աշխարհին առջև Հնդկաստանը ներկայացնող երկու մեծ դէմքերն են՝ ինչպէս ամէն ոք գիտէ՝ Մահաթմա Կանտին և Բապինտրանաթ թակորը: Այս զոյգ ուղիները իրենց անձին մէջ կը մարմնացնեն ու կ'ամբողջացնեն Հնդկաստանը, և իրենցմէ կ'արտագեղու մեծ ամասնու-

թեան ներշնչումները, թէև գաղափարներով, քաղաքականութեամբ ու խառնուածքով իրարմէ տարբեր, սակայն ոգիով իրարու միացած ու սերտ բարեկամ, ու կ'ապրին նոյն շրջանակին մէջ:

Հնդկաստանի այս ղեկավարներուն բոլորին ալ դիմագրաւած հարցերն են՝ ճշգիւ ու կազմակերպել Հնդկաստանի յարաբերութիւնները Արեւմուտքին հետ իւրացնել օտար քաղաքակրթութիւն մը որուն թեքնիքը հիմնուած է էականապէս տարբեր մթնոլորտներու վրայ քան որոնց Հնդկաստանը վարժուած է գործելու, և հաշտեցնել այդ քաղաքակրթութիւնը Հնդկաստանի բնատուր միկ աւանդութիւններուն հետ: Այս հարցերը երկընտրանքի առջև բերած են ամբողջ Հնդկաստանը: Մահարաճան կը պաշտպանէ այն դիրքը ուր կը պետուին այսպէս կոչուած «Լուսաւորեալ բռնապետները»: Ան կ'ուզէ որ Հնդկաստան քայլ առ քայլ հետեւի Արեւմտեան քաղաքակրթութեան ճամբաներուն, մինչև որ վերջնականապէս որդեգրելու հասնի զայն, անոր մեքենական՝ կրթական՝ արուեստագիտական բոլոր կերտուածքովը: Ասիկա քիչ տարբերութեամբ ճիշտ այն է ինչ որ կ'ընեն Ճապոն և ընդհանրապէս Արեւելքի ժողովուրդները ներկայիս, զէպի Արեւմտականացում ցուցուցած իրենց միտումովը: Հնդիկ խաւած առաջնորդներուն միտքն է՝ Արեւմուտքի գործնական հարստութիւններէն օգուտ առնել բայց բացարձակապէս մերժել անոր հետ քաղաքական գործակցութիւն, և ի հարկին բռնական ոյժով վտարել անոր տիրապետութիւնը:

Կանտին դիրքն ու կեանքը ըստ բաւականի ծանօթացուած է Հնդկաստանէն դուրս: Կանտին կը մերժէ՝ խիզախ անկեղծութեամբ մը՝ Արեւմուտքի և Արեւելքի քաղաքակրթութիւններուն միջև համերաշխութիւն

գոյացնելու գաղափարը՝ իբրև անկարելիութիւն մը: Ան կ'ուզէ Հնդկաստանի կատարեալ անկախութիւնը՝ քաղաքականապէս, բարոյապէս, անտեսակապէս, քաղաքակրթականապէս: Թէև յօժար է առ այժմ *soil* ներքև ներքև իրաւակարգը ընդունելու, կ'ուզէ Հնդկաստանը իր սեփական ոյժերու գիտակցութեան կոչել, և անոնց վրայ կանգնեցնել քաղաքակրթութիւնը: Ան կը հաւատայ որ Արեւմուտքի մեքենայաշտ քաղաքակրթութեան հետ ունէ մերձեցում կրնայ միայն չարիք բերել Արեւելքին: Արեւելքը պէտք է ինքզինքը վստահի իր աւանգուծութիւններուն, և զարգացնէ իր ուրոյն պատմական քաղաքակրթութիւնը, որ բնական ստեղծագործութիւնն է իր հոգեբանութեան և արտադրութիւնը իր յատուկ աշխարհահայեացքին: Արեւելքը իբրև Արեւելք պէտք է զարգանայ, կարելի եղած չափով խուսափելով արտաքին շփումներէ և պահելով ու յստակեցնելով իր ինքնուրոյն յատկութիւնները: Այս է՝ կը կարծենք՝ իր ոչ-գործակցութեան (non-cooperation ի) փիլիսոփայութիւնը:

Կայ սակայն Բապինտրանաթի թաւորը՝ Արեւելքի մեծ ծերունին, 1914ին Նոպէլեան Մրցանակին արժանացած և 1915ին Ասպետ հռչակուած բանաստեղծ թատերագիր բարոյագէտ փիլիսոփան, յառաջապահը Հնդկաստանի ներկայ զբաղակալութեան և հայրը նոր դաստիարակութեան, որ Արեւելքի և Արեւմուտքի փոխյարաբերութիւններու հարցին մէջ տարբեր կը խորհի քան Կանտին, և զընահատելով հանգիստ անոր բարոյական ու հոգեկան ոյժը և յարգելով զայն իբր բարեկամ արքայից մարդ՝ կը քննադատէ անոր քաղաքական անգիջական դիրքը: Թաւոր կը մշակէ Արեւելքի և Արեւմուտքի քաղաքակրթութիւններու միջև համագործակցութեան քաղաքականութիւնը: Ան կը հաւատայ որ ոչ միայն կա-

րելի՛ ալ մանաւանդ պէ՛տք է այդ դորժակցութիւնը, հրկուքին ալ վատասերումէ փրկութեան համար: Արեւելք և Արեւմուտք կրնան փոխադարձաբար օգտուիլ իրարմէ: Անոնք իրարու իւրաքանչեւ հարստութիւններ ունին: Էականապէս երկուքն ալ իրարմէ տարբեր չեն, և զիրար կը լրացնեն: Անոնք պէտք է փոխադարձաբար խառնուին իրարու կեանքին, և իրենց համագաշն միացումէն ծնունդ տան նիւթական թէ՛ բարոյական ամրակուռ հիմերու վրայ բարձրացուցած նոր աշխարհաքաղաքակրթութիւն մը, որ եթէ Արեւելքի և Արեւմուտքի մէջ արտայայտութեան տարբեր ձև ունենայ, խորքին մէջ ունենայ նոյն ոգին:

Թափոր Արեւմուտքի նիւթապաշտ և Արեւելքի հոգեպաշտ քաղաքակրթութիւնները՝ առանձնապէս առնուած՝ եղկելիօրէն թեքի կը գտնէ: Ո՛չ Արեւմուտքի շարժումը յառաջդիմութիւն է, կամ յառաջդիմութիւնը՝ քաղաքակրթութիւն, ոչ ալ Արեւելքի ներհայեցողական հոգեւորութիւնը քառ է ամուր քաղաքակրթութեան մը հիմնախորիւրը կազմելու: Արեւմուտքը կեանքը կը վերածէ մեքենականութեան, խլիւղով անկէ ներաշխարհի տնտեսին պայմանները և բնական պարզութիւնը հոգիի արտայայտութեան: Այսուհանդերձ ան մեծ ծառայութիւն մը մատուցած է մարդկութեան, գործի կոչելով մարդկային մտքի կենսալից ոյժը՝ ազդելու և հակակշիռ դնելու համար կեանքի վերայ: Ան՝ մեր մտածումները գործնականութեան մղած է, և քրքրած՝ քննական ու գիտական ոգի: Մեծ միտք ունի Արեւմուտքը: Նամնապէս՝ Արեւելքըն ալ ունի թէ՛ արդիւնք մը Արեւմուտքէն, թէ ալ չարիք մը անոր: Արեւելքը պէտք է շարժի, դուրս գայ իր հսկումներու պարիսպներէն, և ներաշխարհի հնական գանձերէն յառաջ բերէ իր

կեանքի ընծաները աշխարհին, գրաւելու համար իր պատուաւոր գիրքը մարդկութեան մեծ ընտանիքին մէջ:

Ամէն տեղ՝ բարձրութեան ամէն ստորձաննեքուն վրայ՝ մարդկութիւնը էականապէս նոյն խմորն ունի իր հոգիին մէջ: Կը սխալին Արեւմուտքի ժողովուրդները՝ երբ իրենք զիրենք գերադաս կը գաւառին շնորհիւ իրենց երկաթուղիներուն և օդանաւերուն, ինքնահամարում մը որ Արեւելքի մէջ կը ստեղծէ արհամարհանքի հակազդեցութիւն մը: Իսկ Արեւելքի ժողովուրդներն ալ կը սխալին՝ երբ իբր իրենց գերազանցութեան նշան մատնանիշ կ'ընեն իրենց հոգեւորութիւնը, որմէ՝ բոլոր իրենց՝ զուրկ կը մնայ Արեւմուտքը: Արեւմուտք՝ հաւասար մեքենայի: Արեւելք՝ հաւասար հոգեւորութեան— Այս պարզաբանութիւնը կը մերժէ թափոր: Չկայ թեք-նիքականութիւն մը որ ըլլայ առանց հոգեբանութեան, և՛ փոխադարձաբար: Սխալանքը կը կայանայ «յառաջդիմութիւնը» չփոխելէ ճշմարիտ քաղաքակրթութեան հետ: Յառաջդիմութիւնը կը բնայ զուտ նիւթական զարգացում ըլլալ, սակայն ֆալսախորքները էականապէս բարոյական ու հոգեկան արժեքները կայացումն է: Քաղաքակրթութիւն չէ՛ այն կերտուածքը որ ոգիի արտայայտութիւնը չունի իր մէջ:

Թափոր կը կարծէ որ Արեւմուտքի նկարագրին տիրական յատկանիշն է յարաշարժութիւնը, փոփոխախորքները: Արեւմուտքը չի կրնար երկար յամենալ կէտի մը վրայ՝ առանց շուտ մը ձանձրանալու: Կ'ուզէ յարատեւ փոփոխութիւն, ինչպէս կերպասի նորաձեւութիւններու հետեւելու մէջ կը յայտնէ իր այս նկարագիրը: Հետեւապէս՝ թէեւ Արեւմուտքի մէջ ներկայիս հակում մը կայ գէպի Արեւելք, ապիկա չի կրնար երկար տեւել: Արեւելքը մօտադարձած է Արեւմուտքի մէջ, և այդ մօտան կարճ պիտի

տեւէ: Սակայն Արեւելքը կրնայ՝ և պէ՛տք է՝ Արեւմուտքի գիտական յառաջգիտութենէն օգտուիլ տեւականապէս՝ առանց բան մը վրայ տալու իր քաղաքակրթութենէն, ընդհակառակը՝ իր քաղաքակրթութիւնը այդ թեքնիքով արտայայտելով կրնայ առտարել ընդհանուր քաղաքակրթութեան, մեքենային տալով նաեւ ոգի: Արեւելքը ո՛չ թէ պիտի ընդօրինակէ Արեւմուտքը, այլ անոր կազմակերպած մեքենականութիւնը յարմարեցնելով իր խառնուածքին՝ գայն պիտի դարձնէ իր հոգիին արտայայտութեան միջոցը աշխարհին համար:

Արեւելքի և Արեւմուտքի միջև՝ գիտութեան և իրարհակացողութեան հիմերուն վրայ՝ դադափարներու ազատ հաղորդակցութեամբ ու գործակցական ուսումնասիրութիւնով ձգտիլ երկուքին ալ իրարու հանդիպումը իրականացնելու, և այդու զօրացնել հիմնական պայմանները համաշխարհային խաղաղութեան—ահա գործը որ միժ իմաստութիւն և ներհուն ըմբռնողութիւն կը պահանջէ:

Թակոյր այս գաղափարները փորձարկելու համար հիմնած է իր համալսարանը Հնդկաստանի մէջ, ուր հանդիպման կէտ մը հաստատելու կը ջանայ երկու քաղաքակրթութիւններուն միջև: Ներկայիս քիչ մը մթութիւն պատած է իր համալսարանը՝ Շանթի նիքէթընը՝ Հնդկաստանի մէջ բորբոքած ազգայնական ոգիին իբր հետեւանք. բայց ստիկա շեշտելու կը ծառայէ միայն իր գործին ստիպողականութիւնը: Եւ Արեւմուտքի հանգէպ բռնած իր ա՛յս գիրքէն ներշնչուելով է՝ անկասկած՝ որ Թակոյր Արեւմուտքի մէջ յաճախակի ճամբորդութիւններ կը կատարէ՝ աւելի մօտէն ուսումնասիրելու համար անոր տալիք յարմարութիւնները, և փրփալանտն ընելու իր համալսարանին:

ԺԸՆԵԻ (Շարունակելի) Բ. Մ. ԵՂԻԱՆՍՆ

ԳԻՐԲԵՐԸ

Որոշ բան մը ըսել կարելի չէ թէ մարդկութեան մէջ զրականութիւնը ե՛րբ և ի՛նչպէս ծագում առած է: Սակայն գտնուած հին գրութիւնները կը ցուցնեն թէ մարդկութիւնը ի վաղուց ունեցած է զրականութեան փափաքը՝ գրելով քարերու, պապիրոսի, կալի, փայտի, մոմի, կեղեւի, կապարի, և վերջապէս թուղթի վրայ:

Ինչպէս ամէն բան, նոյնպէս գրականութիւնը անցած է մեծ յեղաշրջումէ, աւելի բարձրանալով, ընդարձակուելով ու մաքրուելով:

Ոմանց կարծիքով անգլիերէն «պուք» բառը, որ գիրք կը նշանակէ առնուած է Buoch of Buechus՝ բառեթէն, ինչ որ կը նշանակէ «փեկոնի ծառ» և ասոր կեղեւն ալ ժամանակին թուղթի տեղ գործածուելուն, կը կոչէին «ծառայութեան ծառ»: Արդ իրաւունք ունինք ըսելու թէ իրապէս գրականութիւնը թէ՛ հին ժամանակներու մէջ, և թէ՛ ալ հիմա եղած է «ծառայութեան ծառ»:

Հ. Բաճրրզ ըսած է. «Մարդկութիւնը իր զարգացման մէջ, ամէն բանէ աւելի կը պարտի գրականութեան: Այն միշտ եղած է անցեալ կեանքի գաղաթնակէտը, իսկ ապագայ կեանքին ստորոտը»:

Ս. Գոլթըն ըսած է. «Գրականութիւնը ողբերն է անուշութեան, ինչպէս որ ծաղիկը ակն է մեղրի և անունդը՝ մեղուի»:

Կրնանք ըսել թէ գրականութիւնը մշտահոս աղբիւր մըն է, ո՛չ կը նեխի, ո՛չ կը հիւնայ և ո՛չ ալ կ'ոչնչանայ: Անով ռազմիկներու հետ պատերազմ, զիտուններու հետ աշխատանոց, փրկիստփաներու հետ Ազրոպոլիս, և Յիսուսի հետ դէպի տիպար կեանք կ'առաջնորդուինք:

Կարծեմ սխալած չենք ըլլար երբ մենք ալ Պարթոլինի հետ ըսենք, «Առանց զը»

րականութեան Աստուած՝ լուռ, արդարութիւնը՝ անշարժ, բնութիւնը՝ կայուն, փրկիստփայտութիւնը՝ կաղ, գիրերը՝ համր, և ամէն բան մթութեան մէջ պիտի ըլլան: Սորամանկը գրականութիւնն ու կարգալը կ'արհամարհէ, պարզամիտը կը հիանայ, իսկ խելացին կ'օգտագործէ և ասով կը յառաջդիմէ:

Սակայն ինչ մը կեցիւր մնչպէս որ կրակը բարի ծառայ, իսկ գէշ աէր մըն է, գիրքերն ալ միեւնոյն հանդամանքը ունին: Մենք կը կարօտինք այնպիսի գիրքերու, որոնք միջոցներ ըլլան մեր յառաջդիմութեան, և ոչ այն գիրքերու որոնք կը խամբեցնեն, կը չորցնեն:

Մարդոց համար, մանաւանդ երիտասարդներու համար, ամենադժուար բաներէն մին ալ, «գիրքերու ընտրութիւնն է»:

Մեկտուն ըսած է. «Կան մարդիկ որոնք գիրքերը կը մեռցնեն, և կան գիրքեր ալ որոնք մարդերը կը մեռցնեն»:

Ալէքսանտր Փոփ ըսած է. «Որքան մեծ է թիւը այն գիրքերուն՝ որոնք թոյն կը պարուենակեն, ասոնք անբարոյական կիներու կը նմանին»:

Այս մեր ամենօրեայ կարգացած գիրքերը մեր ընկերներն են, և վստահ եղիր որ, ինչպէս որ մեր բարեկամները մեր կեանքի ուղղութեան կ'ազդեն նմանապէս գիրքերն ալ աւելի կ'ամնուազ չափով կ'ազդեն մեր կեանքին վրայ: Կը սիրեմ տեսնել սերտող, միշտ կարգացող երիտասարդը, սակայն կը խղճամ, հոգիս կ'արտասուէ երբ տեսնեմ մէկը, որ կը կարդայ սիրահարական, անբարոյական, ոճրագործական և վրէժխնդրական գիրքեր: Ահ երանի թէ հասկըցուէր որ այդ տեսակ գիրքերը անօգուտ են, և միայն կը փատեցնեն մարմինը, կը փթացնեն միտքը և կը մեռցնեն հոգին:

Քանի՜ քանի՜ մարդիկ գէշ գիրքերու ազդեցութեամբ անձնասպանութեան

և մարդասպանութեան առաջնորդուեր են, փոխանակ կեանքը վայելելու, և փոխանակ կեանք արտագրիւտ քշուեր են յաւիտենական կորուստի խաւար զօռիքը: Ո՞վ ընթերցող, զգուշացիր այսպիսի գիրքերէն, ասոնք հիմայ աւելի ընդհանրացիր են: Կարդա՛յն տեսակ գրքեր, որոնք մարմինդ կը զօրացնեն, միտքդ կը սրեն և հոգիդ կը լուսաւորեն:

Պընի «Որոշում» անունով գիրք մը կը հեղինակէ. 1640ին Պաքսթըր Րիչարտ անունով երիտասարդ մը գայն կը կարգայ ու կ'ապաշխարէ և Բիւրլիթաններուն մի քարոզիչը ըլլալով ինքն ալ կը գրէ 170 գիրքեր, որոնցմէ մին էր «Կոչ մը չ'ապաշխարածներուն»: 1720ին այս գիրքը կարգացող Ֆիլիփ Տատրիճ կ'ապաշխարէ, կ'ըլլայ քարոզիչ մը և կը գրէ «Կրօնքի Ծագումը եւ Զարգացումը Հոգւոյն մէջ» անուն գիրքը: 1780ին այս գիրքով Ուիլիւմ Ուիլյամս-Փօրս կ'ապաշխարէ և կ'սկսի իր հարըստութիւնը ազգատներու բաժնիլ, և գերիներու ազատութեան համար աշխատիլ և կը գրէ «Քրիստոնէութեան Գործնական Երեւոյթը» անուն գիրքը:

1830 ին այս գիրքը կարգացող Լէյկ Րիչմընտ կ'ապաշխարէ և կ'ըլլայ քարոզիչ մը ու կը գրէ «Երիտասարդ Հիւզակաւորը» գիրքը, որ բիւրաւոր մարդոց փրկութեան պատճառ կ'ըլլայ:

Ասիկա բազմաթիւ օրինակներու մէջէն միայն մէկն է: Այս գրքերն ու բարձր գրականութիւնը անտաշ մարդը կը տալեն, յետամնացը կը յառաջացնեն, կայուն ու նիսած հոգիները շարժման մէջ կը դնեն, երկրէն երկինք կը փոխադրեն:

ԵՆՈՎՔ Կ՝ՕՔԿԼՕՁԵԱՆ

ՄԻՍԸ (Proteid) ԻՐԲԵՒ ՍՆՈՒՆԻ

Թթէ մեր կերած հարկւրաւոր տեսակ կերակուրներու ցանկը ի նկատ առնենք պիտի տեսնենք որ անոնք չորս քիմիական բաղադրութիւններու, այսինքն միսի, իւղի, օսլայի (շիշէ) և շաքարի տարրեր համեմատութիւններով խառնուրդներն են: Այս բաղադրութեանց արժէքը Կալորի ըստած չափով մը կը չափուին: Գալորի մէկ լիթրա ջուրը սանդիկրատով մէկ աստիճան տաքցնող ջերմութիւնը կամ ուժն է: Մէկ կրամ միսը չորս, իւղը իննուկէս, շաքար կամ օսլան չորս գալորի ոյժ կը պարունակէ: Այս չորս բաղադրութեանց մէջ թերևս ամենակարեւորը միսն է, քանզի միսը իր գալորի արժէքը ունենալէ զատ՝ մեր մարմնոյն 100 քառիլոն բջիջներուն (celle) ամէնն ալ մսեղէն (proteid) նիւթէ շինուած ըլլալուն համար անոնց նորոգումը և սնունդը մսեղէն սնունդի միջոցաւ կարելի էր. միսն է որ մարդկային մարմինը կը շինէ և անոր գործնէութիւն ու կորով կը պարգեւէ:

Այս սնունդի մասին լաւ գաղափար մը կազմելու համար մի գաղափարը ընդարձակելու պէտք ունինք: Միւս ըսելով միայն կենդանեաց մարմնէն առնուած միսը հասկնալու չենք. կան բաւական հունտեր որ ամբողջութեամբ մըստային նիւթ կը պարունակեն, գործիւնակ ոսպը, սիսեռը, չոր ֆատուլիան, ոլոռն (պեպիլեա) ևն, կան նաև հունտեր որ մասամբ մսային նիւթ կը պարունակեն, ինչպէս ցորենը 0.16, եգիպտացորենը 0.12 մսային նիւթ ունին: 100 կըրամ միս կամ 100 կրամ ոսպ ուտել քիմիական տեսակատէ ճիշտ միւսնոյն բաշըն է. միայն թէ ոսպը շատ դժուարամարս ըլլալուն համար մեր մարմինը անոր մէջ գտնուած մսեղէն նիւթին հաշիւ թէ մէկ չորրորդը կրնայ օգտագոր-

ծել, իսկ մնացածը անմարս դուրս կը հանէ: Կենդանիներ շատ երկայն ու զօրաւոր աղիքներ ունենալնուն պատճառով բոյսերու մսեղէն նիւթերը լաւ կըրնան մարսել և այսպէսով մեզի իբրև միս պատրաստող գործարաններ կը ծառայեն: Մենք լոկ բուսեղէն միսերով չենք կրնար ապրիլ և կատարեալ և գործօն մարդկային էակներ ըլլալու համար կենդանական միսի անհրաժեշտ պէտք ունինք:

Կենդանական միսերու մասին ալ պարտինք ծանօթութիւններ աւելի. ունէ կենդանի միսը գուտ մսային նիւթ (proteid) ըլլալէ շատ հեռու է. ընդհանուր առմամբ մսերու 100ին 60ը պարզ ջուր է, 100ին 15ը իւղ, իսկ մնացած 100ին 25ը միայն գուտ մսային նիւթ է. այնպէս որ մսավաճառէ 100 կրամ միս առնող մարդ մը պէտք է զիանայ որ միայն 25 կրամ քիմիական գուտ միս կը առնէ: Տարբեր կենդանեաց միսերուն մէջ վերի համեմատութիւնը քիչ շատ կրնայ տարբերիլ:

Մեր մսեղէն սնունդեան մի ուրիշ աղբիւրը կաթ, մածուն, պանիր և հաւ կիթ է: Ասոնք քեթև մեղկն կը կոչուին և մսեղէն նիւթի ամենազարմար սելի տեսակներն են. այս պատճառով է որ պանոնք կենդանիներու համար կը գործածենք: Կաթը բժշկական տեսակէտէ գաղափարական սնունդ մը կը նկատուի, քանզի իր մէջ մարդկային սնունդեան համար պէտք եղած ամէն տեսակ կերակուր կը պարունակէ, ասոր ապացոյցը այն է որ մեր նորածինները տարի մը միայն մօր կաթով կ'ապրին ու կը մեծանան: Կովու կաթը իր մէջ 0.67 ջուր, 0.04 իւղ, 0.05 շաքար, 0.035 մսեղէն և 0.02 աղիւր կը պարունակէ. կնկան կաթը այս համեմատութիւնէ քիչ մը աւելի շաքար բայց նուազ իւղ կը պարունակէ:

Առողջապահական շատ մը փորձերէ

վիրջ ալյուպէս հասկցուած է որ, 70 քիւօ կշռող և օրական 9—10 ժամ աշխատող գործաւոր մը, օրական 118 կրամ գուտ միս, 59 կրամ իւղ, 500 կրամ շաքար ու օսլայ պէտք է ուտէ, զաւրրի հաշուով 3000 զաւրրի պէտք ունի: Միջակ գրազումներ ունեցող մարդ մը 2560 զաւրրի ուժ ալ լաւ կրնայ ապրիլ: Մարդիկ ապրելու համար իրենց պէտք եղած 100—118 կրամ մսային նիւթին կէսը բնականապէս ուղղակի միս սնունդէ իսկ միւս կէսը բուսեղէն հուստերէ և կաթէ, պանիրէ ու հաւկիթէ կ'առնեն: Եթէ մսեղէն սնունդի քանակը չափէն աւելի պակսի, անոր մէջի վիթամինի նուազումէն անարիւնութիւն և մարմնային տկարութիւններ յառաջ կ'ուզան:

Մարդիկ միս ուտելու տեսակէտէն երկու ծայրայեղութեանց դաջած են. ստուար աղքատ դասակարգը՝ որ զիւղացիներու մեծամասնութիւնը իր մէջ կը պարունակէ մսի սղութեան պատճառաւ շատ քիչ միս կուտեն. ունեւոր դասակարգէ մարդիկ՝ որոնք աւելի քաղաքներու մէջ կը բնակին՝ պէտք եղածին մի քանի անգամը միս կ'ուտեն: Երկու ծայրայեղութիւններն ալ վնասակար են: Այս խնդրոյն վրայ պահ մը ազգային տեսակէտէ ակնարկ մը նետել կուզենք. Բէնապի և Սուէյիոյ զիւղերուն մէջ բնակող իմասնաւորի իգական սեռի վերայ նշմարուած անարիւնութիւնը, կազմային տկարութիւնը, ակունքներու վաղահաս փտտումը ունէ բժշկի ուշադրութեանէն չեն վրիպիր: Մեր կարծիքը այս է որ, այս ցաւալի իրողութիւնը երկու պատճառներ ունի. մէկը՝ շուտ ամուսնացումը շուտ ծննդաբերութիւններ իսկ մէկալը, թերեւս աւելի կարեւորը, անոնց՝ մարդկային կազմի համար պէտք եղած թանկագին մսեղէն սնունդէ զրկուելն է: Այդ առողջ և ջինջ լինելու կողմերուն վրայ ինչո՞ւ աւելի կայտառ, աւելի երկայնահասակ, աւելի զօրաւոր

աւելի գեղեցիկ իգական սեռ մը չունենանք: Չբաւարութեան պատճառով այս զիւղերու մէջ շատ քիչ մսեղէն սնունդ կ'սպասի. կաթ, հաւկիթ և պանիրի նման թիթե մսեղէն սնունդները որոնցմէ կրնան օգտուիլ, զիջողաբար ուրիշ պէտքեր հոգալու համար ծախսուելու կ'ստիպուին և այսպէսով կենսատու մսեղէն սնունդէ կը զրկուին:

Հոս պարտինք մատնանշել նաեւ չափազանց մսակերութեան վնասները: Միսը մեր մարմնոյ շինութեան ստատարիւն և գործածուելէ վերջ թունաւոր նիւթերու կը վերածուի, որոնք ամէն վայրկեան երիկամունքներու միջոցաւ կ'արտաքսուին. կրկնապատիկ միս ուտող կարգու մը երիկամունքները բնականաբար արտաքսելու համար կրկնապատիկ թոյներ ունի. երիկամունքները այս ծանր բեռին տակ երկայն տարիներ չեն կրնար գիմանալ, շուտ կը հիւնանա ու կը հիւանդանան: Բացի աստի այս թոյնէրը մարմնէն լաւ չեն մաքրուիր, մասամբ մարմնոյն մէջ կը մնան և այսպէսով մեր մարմնոյն բոլոր բջիջները տարիներով թունաւոր միջավայրի մը մէջ մպրելու կ'ստիպուին, որու հետեւանքը կ'ըլլայ պնդերակութիւն (Arterio-Sclerosis) կոչուած մահացու հիւանդութիւնը: Այս պատճառաւ է որ քաղաքներու մէջ ուր չափազանց մսակերներ շատ կը գտնուին կաթնածախարութիւնը սովորական դարձած հիւանդութիւն մըն է. իսկ զիւղի բնակչութեան մէջ կաթնածախարութիւնը հազուադէպ է:

Միս չզանաւոր վայրեր հաւկիթը և պանիրը միսի տեղը կրնան բռնել. 50 կըրամ կշռող հաւկիթի մը մէջ 9 կրամ գուտ միս (proteid) 5 կրամ իւղ, 36 կրամ ջուր կայ. ալյուպէս որ հաւկիթը միսի տեսակէտէ շատ աւելի հարուստ է քան թէ հասարակ միսը. նոյնպէս լաւ պանիրն ալ իր ծանրութեան չափ միսին կը հաւասարի:

Մեր կարգացողներուն անողջ և գործունեայ կեանք մը ունենալուն համար միս և մսեղէն նիւթերու միջակ գործածումը կը յանձնարարենք. նախաճաշի համար պաւսթ մը կաթ և կաթը մը պանիր ու հաց միջակ սնունդ մ'է. ճաշի համար բաւականաչափ հացով մարգ գլուխ 100 կրամ միս պարունակող կանաչեղէն կամ հնաեղէն կերակուր մը միջակ մսեղէն սնունդ կրնայ մատակարարել. իրիկուան համար բրինձով կամ ոսպով ապուր մը և երկու հաւկիթ բաւականաչափ հացով օրական անհրաժեշտ եղող ԷՕ կրամ մսեղէն նիւթը կրնայ հայթայթել. **Հաղեպ** (ՏՈՒԹ.) Ա. ՃէՊէճեԱն

ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

ԵՒՐՈՊԱՅԻ և Ամերիկայի միջև օդային ճամբորդութիւններ կատարելու փորձերը կը շարունակեն. Ալիսարհի մէջ հիմա մեծագոյն նկատուող անգլիական օդանաւին, R. 100 ի, Անգլիայէն դէպի Գանատա կատարած թռիչքէն ետքը Ֆրանսացի երկու սաւառնորդներ յաջողեցան իրենց սաւառնակով Ֆրանսայէն Մ. Նահանգներ թռչել. Եւ մօտերէն գերմանական հսկայ սաւառնակ մը, DO-X, որ օդանաւի մը առածին հաւասար թիւով ճամբորդներ առնող առաջին սաւառնակը պիտի ըլլայ, Եւրոպայէն Ամերիկա պիտի թռչի. Մինչև հիմա Եւրոպայէն Ամերիկա օդային ճամբորդութեամբ 475 մարդեր հասած են (Ֆրանսական վերջին երկու սաւառնորդները ուսոր մէջ չկան). Այս թիւին 442ը օդանաւով իսկ միայն 33ը սաւառնակով Ազլանդեանը տնցած են. Մինչև հիմա օդանաւով կատարուած ինը փորձերուն բոլորն ալ յաջողած են, առանց կեանքի կորուստի բացի R. 101էն որ այրեցաւ. իսկ սաւառնակով կատարուած 37 փորձերուն միայն 13ը յաջողած են, մարդկային մեծ կորուստի պատճառ դառնալով:

ՆԵՐԿԱՅԻՍ ալիսարհի բարձրագոյն շէնքերն են, — Մ. Նահանգաց մէջ՝ Ուուլուբրթի շէնքը 792 ոտք, Բրիսլըր շէնքը 808, Մէնհէթընի Դրամատունը 838, The City Bank and Farmers Trust Co. շէնքը 925 ոտք. և Էյֆէլի հռչակուոր աշտարակը 1000 ոտք բարձրութեամբ Փարիզի մէջ. Գիտունները հիմա կը կարծեն թէ դէպի վեր շինութեան մէջ կարելի առաւելագոյն սահմանն է 2000 ոտք բարձրութիւնը. Այս սահմանին ամէնէն աւելի մօտեցողը պիտի ըլլայ Նիւ Եորքի մէջ կառուցուելիք Empire State Building անուն շէնքը, որ պիտի բաղկանայ ԷՏ յարկերէ, 1043 ոտք բարձրութեամբ, և որուն վրայ պիտի բարձրանայ երկրորդ շէնք մը 200 ոտք բարձրութեամբ. Այս շէնքին պատեհուն մէկ մեծ մասը պիտի շինուի մէկ քսաներորդ մասնաշաղկի թանձրութեամբ անժանգոտելի պողպատէ տախտակներով. Ապագայ շէնքերուն պատերէն մէկ մեծ մասը, կ'ըսեն գիտունները, պիտի շինուի ապակիէն:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՏՐ. ՃէՅՄՍ ՊԱՐԹԸՆ, որ Մերձաւոր Արեւելքի մէջ շրջան մը կը կատարէ ներկայիս, Նոյեմբեր մէկին Աթէնքէն դէպ ի Սուրիա ճամբայ պիտի ելլէ. Կը տեղեկանանք որ Տր. Պարթըն Սուրիան պիտի այցելէ Մերձաւոր Արեւելքի Հաստատութեան (նախկին Նիյր Իսթ Րիլիֆի) կողմանէ, որ ներկայիս մեծապէս կը հետաքրքրուի զիւղատնտեսութեամբ. Սոյն հաստատութիւնը Ալպանիոյ մէջ զիւղատնտեսական փորձեր կը կատարէ, եւ վերջերս Ալպանիոյ կառավարութեան գործակցութեամբ դպրոցի նոր շէնք մը բացած է. Պուլկարիոյ մէջ Ամերիկեան Պորտի կողմանէ Տր. Հասքէլի վարած զիւղատնտե-

սական վարժարանը այս հաստատութեան յանձնուած է: Զուգեցերիացի Հէր Եազոպ Բիւնձլըր նոյն հաստատութեան կողմանէ նոյն նպատակով կը շրջի Հիւսիսային Սուրիան եւ ներկայիս կը գտնուի Հալէպ:

ԽՐԻՄԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՁ

Բնիկ վանքի Տօքթ. Արմենակ Պարոնիկեան Գերմանիոյ մէջ կազմած է ընկերութիւն մը Գերմանիոյ Հայ Լուսաւորչական առաքելութիւն անունով որուն կ'անդամակցին «31000 հայասէր Գերմանացիներ» կը գրէ «Սիոն» (թիւ 10, 1930): Ընկերութիւնը ունի «նոր Հայաստան» անունով գերմաներէն պաշտօնաթերթ մը, զոր «կը վարէ ինքը Պարոնիկեան»: Թերթին նպատակն է Հայը ճանչցնել Գերմանացիներու, «զանոնք հրաւիրել օգնելու անոր զարգացման եւ բարձրացման»: Այս ընկերութեան օգնութեամբ նիւրէնպէրի քաղաքին մէջ կը բացուի կրօնական հաստատութիւն մը իւրիւնեան ձեռնարան անունով, ուր պիտի պատրաստուին Հայ եկեղեցականներ հայեցի ոգիով եւ հաւատքով ու բարձր ուսումով»: Տօքթ. Պարոնիկեան Մ. Արեւելքի ըրած իր վերջին այցլին առթիւ հինգ երիտասարդներ արձանագրած եւ հետը Գերմանիա տարած է:

«ՊՅՅԶ ՀԱՅ ՍԳՈՒԼ» Ի աշակերտութեան թիւը հասած է 150ի: Այս տարի նոր գետին մը վարձուած է իւր խաղաղայր գործածուելու համար, ուր Պէսքէթ Պօլ, Ֆուլթ Պօլ, Ուալի Պօլ, Թէնիս եւ ուրիշ խաղերով աշակերտները պիտի զրօսնուն ամէն Չորեքշաբթի եւ Շաբաթ կէսօրէ կտքը:

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի նախագահը Տր. Տաճ իր Հալէպ այցլին

առթիւ զպրոցիս մէջ խօսած է փոքր ազգերու քաղաքակրթութեան մէջ ունեցած մեծ բաժնին մասին:

ԳՈՒԷՅԹԻ բժիշկ միովոնարը, Տօքթ. Միլրէ եւ զպրոցին աշակերտներուն խօսած է մարգարիտի որսորաններու մասին, քաղաքս կատարած այցելութեան առթիւ:

ՎԵՐ. Հ. Հ. ՐԻԿՁ իր աւետարանչական պատգոյտին առթիւ այցելեց նաեւ քաղաքս:

ԱՆԹՈՒԼԻԱՍԻ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ բացուած է 34 աշակերտներով, որոնցմէ մէկը եւս վերագործած է Հալէպ: Մնացեալ 33ին 15ը Հալէպի Պոյզ Հայ Սքուլի, Կրթասիրացի, Հայկազեանի, Թէքրա Սանթայի, (Շըպէնի Գուէճի) թերաւարտ աշակերտներ են, եւ 18 հասը Գամասիկոսի, Պէյրութի, Գըրըզիսանի եւ Աղեքսանդրէթի զպրոցներէն են: Աշակերտութիւնը բաժնուած է երկու մասի, մէկը մասնաւոր դասարան մը կը կազմէ՝ վեց աշակերտներէ բաղկացեալ, որոնք մէկ կամ երկու տարուայ ուսումէն վերջ վկայական պիտի ստանան: Իսկ միւս մասը կը կազմէ նախապատրաստական բաժինը: Տ. Բարգէն Եպիս. Կիւլէսէրեանէ եւ Տ. Շահէ Վրդ. Գասպարեանէ զատ երկու հայ աշխարհականներ — մէկը բժիշկ եւ միւսը նախկին ուսուցիչ մը — եւ Ամերիկացի մը կը կազմեն ուսուցչական մարմինը:

ՆՈՐ ԿՐԾՆԱԿԱՆՆԵՐ

Հոկ. 12ին Երուսաղէմի մէջ Ժառանգաւորաց Վարժարանի 8 շրջանաւարտները աւագ սարկաւագ ձեռնադրուած են: Ասոնք 4 տարի եւս Ընծայարանի մէջ կարգալէ ետքը վարդապետ պիտի ձեռնադրուին:

Օգոս. 23ին Ս. Յակոբայ Տաճարին մէջ Միաբանութեան 13 արեւանիւրը

Վարդապետութեան Մասնաւոր իշխանութիւն ստացած են: Ասոնց մէջ կը գտնուին նաեւ Տ. Նորայր Վրդ. Պօղարեան և Տ. Տիրան Վրդ. Ներսոյեան ուրոնք Անգլիոյ մէջ իրենց ուսումը լրացնելով նոր վերագործած և գործի լծուած են:

ՅՐԱՆՍԱՅԻ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան տարեկան ժողովը այս տարի տեղի ունեցած է Մարտէլի մէջ Սեպտ. 8-12ին:

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ մէջ, Հայ Աւետ. Ժողովական եկեղեցիէն զատուած «Աւետ. եղբայրութիւնը» Օգոստոսի վերջին և Սեպտ. առաջին շաբաթներուն միջոցին ժողով մը ունեցած է մասնակցութեամբ Պուէնոս Այրէսի 3, Գորտոպայի երեք և Մոնթէվիդէոյի 3 պատգամաւորներուն: «Եղբայրութեան» կեդրոնին հետ միութիւն մը կառարելու և սերտ յարաբերութեան գալու մասին խորհրդակցութիւններ եղած են տաւանց որոշ արգիւնքի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ-ՆԵՐՈՒ միութեան Բրիտանական ճիւղին քարտուղարը Տր. Ժ. Քէլի որ Եւրոպայի Միջազգային Ե. Ք. Զանից Միութիւնը կը ներկայացնէ միւսին առեւ, Եւրոպայի մէջ չըջան մը ընելէ ետքը Եղիպտոսի և Պաղեստինի ճամբով հասած է Հալէպ՝ ուսումնասիրելով մանկանց և երիտասարդաց քրիստոնէական դաստիարակութիւնը: Տր. Քէլի Հոկ. 29ին խօսեցաւ Պօյլ Հայ Աքուլի մէջ, կարճ պատգամ մը տալով միջցեղային և միջդասակարգային բարոք յարաբերութեանց մասին: Տր. Քէլի շուտով պիտի մեկնի Հնդկաստան:

«ՆՈՐ ԱՐԱՔԱ» անունով և 60 հոգիէ բաղկացեալ Հայ գիւղ մը կազմուած է

Խաւիա, Պարի քաղաքին մօտ, Ազրիականի եզերքը նախաձեռնութեամբ բանաստեղծ Հրանտ Նազարեանցի և հովանաւորութեամբ Խաւալայի հայաօններու: Գիւղին բնակիչները 1924ին Պարի եկած Հայ վաղթականներն են, որոնք հիմա կ'գրաւին զորպագործութեամբ: Գիւղը օժտուած է եկեղեցիով, դպրոցով և այլն հանրային շէնքերով և ելեքտրականութեամբ:

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ կը տեղեկանանք որ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան ընդհանուր քարտուղարութեան պաշտօնին կոչուած է Տր. Երուսնդ Հատրտեան յառաջիկայ մէկ տարուան համար:

Վեր. Ա. Ա. Պետրիկեան կը շարունակէ Ընկերակցութեան Կեդր. Գործադիր Խորհուրդին քարտուղարութեան պաշտօնը:

ՅՐԱՆՍԱՅԻ մէջ Մարտէլի թեմը ունի 30000 հայութիւն, 9 եկեղեցի կամ մատուռ, 14 դպրոց, տարեկան 300000 ֆրանկի եկեղեցական կրթական պիւտճէ մը:

Ս. ԳՐԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԿԻՐ. Դըպրոցներու Միջազգային Միութեան անդամակցած դպրոցներու թիւը—Անգլեր Յորդանանի, Պաղեստինի, Սուրիոյ և Միջագետքի մէջ— եղած է 78:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Քերմանշահ քաղաքին մէջ պատերազմէն ետքը Հայ գաղութ մը կազմուած է մի քանի տասնեակ ընտանիքներով, որոնք 7 տարիէ ի վեր կը պահեն նախակրթարան մը 35-40 աշակերտներով:

صاحب الامتياز و مدير المسئول
قيس قريبت هاروتونيان